

Մ Ա Մ ՈՒ Լ Ի Բ Ա ժ Ի Ն Ը

Ա.Ղ.Բ.Ի.Ի.Բ ամսագիրը , մանուկներու կրթութեան նուիրուած միակ թերթը , նոր տարեշրջանէն սկսեալ յառաջդիմութիւն մը ցոյց կուտայ . ինչպէս նաեւ .

Ա.ՐԱ.ՐԱ.Տ , որ նոր խմբագիրներու ձեռքին մէջ աւելի բան կը խոստանայ , — թէեւ համակարծիք չլինիմ Հայերը Հաթեաններու հետ համացեղ համարելու դադարիսին :

ԲՍ.ՁՄԱ.Վ.ԷՊ , մեր ամենէն երէցը , իր աժխոյժ խմբագրականներով ու պէսպիսութիւններով միշտ երիտասարդի մը տպաւորութիւնը կընէ : Բայց Վ. Փափաղեանի «Հայ-Բոշաներ» յոդուածին մէջ սխալներ կան , սխալներ , որոնք սպրդած են նաեւ «Մոսկվայի Կայս. ազդ. ընկ.» աչքէն . ուստի եւ նոյն Ընկերութեան կողմէ Վ. Փ. -ի «աշխատութիւնը պատկուեցաւ եւ յայտարարուեցաւ որպէս կատարեալ» : (Բզմ. էջ 167) : Վ. Փ. նոյնտեղ կը յայտնէ նաեւ որ «Հայ-Բոշաների կրօնը լուսաւորչական քրիստոնէութիւնն է , » (էջ 169) . մինչդեռ յայտնի է որ հռոմէադաւաններ ալ կան անոնց մէջ :

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵՍ.Յ այլ եւս դադրած է ուշագրաւ լինելէ : Չկան հոն ներքին ուժերը ներկայացնող դրութիւններ , բացի գերմաներէնէն մի քանի թարգմանութիւններէ : «Բանասէր» առանձին , նիւթական ամէն միջոցներէ զուրկ եւ բոլորովին աննախանձելի դրութեան մէջ , երեք տարի շարունակ կատարեց այն գործը ինչ որ իր տրամադրութեան տակ առատ դրամ , ձրի տպարան եւ ճոխ մատենադարան ունեցող Միւրաւնութիւն մը չկրցաւ ընել :

Ստացած ենք հետեւեալ նոր հրատարակութիւնները .

ԲԺ. Սիմէօն Շահ-Նազարեանց . — «Հայոց Թեմական Հոգեւոր Գրարոցների կանոնադրութեան նախագիծը» . կոմս Յովհ. Լազարեանցի լուսատար պատկերով : Մոսկուա , տպ. Բարխուդ. 1902 : Գինն է 1 ռ. :

Յովհաննէս Վրդպտ. Միսքճեան . — «Սրբոյն Սահակայ կաթուղիկութիւն եւ Մեսրոպայ վարդապետի ձեռնասուն եւ երիցագոյն աշակերտք եւ առաջին թարգմանիչք Ե. դարուն» : (Արատապ. «Հանդ. Ամս. »էն) : Վիւեննա 1902 :

ԲԺ. Վահան Արծրունի . — «Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյնը» . պատկերազարդ : (Բժշկի զրոյցներ N^o 3) : Թիֆլիս , տպ. Վր. Հր. Ընկ. 1902 : Գինն է 15 կ.

Ե. Թ. — «Սահակ Պարթեւ» : (Հրատ. Յ. Արամեանցի) : Պետերբ. , տպ. «Պուշկ.» 1902 : Գինն է 5 կ.

— . — Հաուպտման» : (Հր. եւ տպ. նոյն) : Գինն է 15 կ. :

Ե. Լալայեանց . — « Ազգագրական հանդէս» . պատկերազարդ : Զ. տարի , VII եւ VIII Գրքեր , 1901 :